

սղանմամբ շեշտութիւն եւ լրջութիւն տալ խորհրդոց եւ խորհրդականաց մատակարարութեան: Դարձեալ Անապատն պիտի ըլլար հրահանգանոցը, ուր հաւաքուած էր մեծ թուով աշակերտութիւն: Այդ վանականներու ձեռօք պիտի տնկուէին հին կարգերը գիւղերու եւ քաղաքներու մէջ:

Մովսէս վարդապետ, որ անցած էր Ամթայ դպրոցէն, ուր կը ծաղկէին հին կարգերը հողածութեամբ Ղուկաս Կեղեցւոյ եւ Սրապիոն Ուրհայեցւոյ, եւ հմտացած էր քաջամէն հրահանգներու եւ սովորութիւններու, Պօղոս Մոկացւոյ հետ գլուխ կանգնեցաւ գործին:

Նկատմամբ ժամասացութեան հետեւեալ որոշումներն եղան.

Գիշերային ժամը լման պիտի պաշտուէր. Յիշեսցուք տէրունական տօներուն՝ եղանակով. պիտի քաղուէր երկու կանոն սաղմոս, կանոնագլուխը ձայնիւ. Հոգեհանգստեան կարգը պիտի կատարուէր (տէրունական օրերուն) անխափան: Օրհնութեան կից պիտի երգեցուէին Քաղուածքներ շարականներէն, իսկ Թագաւորք եւ Ալելուիա ձայնիւ: Գիշերային ժամին աւարտելէն ետքը պիտի ընթեռնուին Յայտմաւորք եւ կից ընթերցման համապատասխան Շարական մը կամ Գանձ մը երգէին:

Առաւօտեան եւ Արեւագալի ժամէն ետքը կը կարդացուէր խրատական գիրք մը: